

Բացատրություն Սուրբ Պատարագի

Փրկության Հաւատի ճամբով

Մաս Գ

Ս. Պատարագի ընթացքին կարևորագոյն և ամենահիմնական ընծան, որ հաւատացեալը պէտք է նուիրէ Աստուծոյ՝ իր հաւատն է: Հաւատաւոր քրիստոնէան, երբ ինքզինքը հոգևորապէս պատրաստ է Ս. Սեղանին ճաշակել-լու Քրիստոսի անապական մարմինն ու արիւնը, նախ պէտք է իր գործած մեղքերը գիտակցի և գոչայ իր սխալներուն համար: Ան ամբողջ հո-գիով, մտքով ու սրտով պէտք է խոնարհի Տիրոջ առաջ ու ներում խնդրէ և երկիւղածութեամբ ու հաւատով ստանայ Ս. Հաղորդութիւնը:

Քրիստոնէական համայնքի մը կորիզը կը հանդիսանայ կրօնական պաշտամունքը: Առանց պաշտամունքի քրիստոնէական համայնքը կը դադրի կրօնական համայնք ըլլալէ: Իսկ քրիստոնէական համայնքին կեանք տուողը՝ համայնքի իւրաքանչիւր անդամին ունեցած հաւատն է, որ օղակի մը նման կը զօրացնէ և հաստատուն կը պահէ ընդհանուր համայնքին հաւատը: Ս. Պատարագը պաշտամունք է, որ կը մատուցուի Ս. Սեղանի վրայ հաւատաւորներու կողմէ և կ'ընծայուի Աստուծոյ. իսկ Քրիստոս գոհն է, որ կը պատարագուի հաւատացեալներու մեղքերու քաւութեան ու թողութեան համար: Քրիստոս, որ Աստուծոյ կողմէ ընծայուեցաւ համայն մարդկութեան, Ս. Պատարագի խորհրդով կը բաշխուի մկրտուած հաւատացեալներու: Նոյն խորհուրդով, Քրիստոսին վերստին Հօրը մատուցելով, հաւատացեալները գոհութիւն և փառք կը մատուցեն Աստուծոյ՝ Մեսիային միջոցով կրկին Ամենակալի գութին արժանանալու և մեղքերու քաւութիւն ու թողութիւն ստանալու համար: Հաւատաւորի մը հաւատը իր հոգիին զօրացման համար այնքան կարևոր է, որքան որ ջուրն ու հացը անոր մարմինին սնուցման համար: Եթէ Զանանացի կինը հաւատ չունենար, ինչպէ՞ս պիտի բուժուէր անոր դուստրը, որ դիւահարութեամբ կը տառապէր: Քրիստոս տեսաւ մօր հաւատը և անոր ըսաւ, "Ով կին, մեծ է քո հաւատը, քեզի թող ըլլայ այնպէս՝ ինչպէս որ կը կամենաս" (*Մատթ. 15:21-28*): Նոյնպէս, երբ Յիսուս Իր աշակերտներուն հետ դուրս կու գար Երիթովէն, կոյր Բարտիմէոսը նստած կը մուրաբ ճամբուն եզրին: Երբ ան լսեց, որ Յիսուս Սագովրեցի մօտէն կ'անցնի, աղաղակեց ըսելով, "Դաւիթի Որդի, Յիսուս, ողորմէ ինձի" (*Մարկ. 10:47*): Եւ հակառակ որ անոր սաստեցին, որպէսզի լռէ, ան կրկին բարձրաձայն աղաղակեց: Յիսուս լսելով անոր ձայնը հրամայեց, որ Իր քովը բերեն կոյրին: Քրիստոս անոր հարցուց, "Ինչ՞ կ'ուզես, որ քեզի ընես": Կոյրը ըսաւ, "Վարդապետ, աչքերս թող բացուին": Տէրը անոր պատասխանեց, "Գնա, Քո հաւատը քեզ փրկեց" (*Մարկ. 10:46-52*): Կոյրին աչքերը բացուեցան ու ան հետևեցաւ Վարդապետին:

Հաւատէ աւելի զօրաւոր ուժ գոյութիւն չունի քրիստոնէայի մը կեանքին մէջ, որ կարեւոր հաւատացեալին ուղեկցել Աստուծոյ ճանապարհին վրայ ընթանալու անվարան կերպով:

Քրիստոսի կեանքին մասին անտարանիչներուն վկայութիւնները ցոյց կու տան, թէ Տէրը ինչպէ՞ս կը գործէր երկնային իշխանութեամբ (*Յովհ. 5:19-30*): Յիսուս Իր գործերովն իսկ կը վկայէր Իր մասին և կը հաստատէր, թէ Հայրը, որ զինք ուղարկեց, վկայած է Իր մասին (*Յովհ. 5:36-37*): Իբրև հաւատքի աղբիւր, Յիսուս դարձաւ, և է՛ յաւիտեան (*Եբրայ. 13:8*), միակ ճրջ-մարիա յաւիտենական կեանքի խօսքը, ինչպէս վկայեց Պետրոս Առաքեալ ըսելով, "Տէր, որո՞նք քով պիտի երթանք: Դուն յաւիտենական խօսքեր ունիս: Եւ մենք հաւատացինք ու ճանչցանք, որ դուն ես Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին" (*Յովհ. 6:69-70*): Թէև առաքեալները երբեմն վարանե-ցան իրենց հաւատքին մէջ մինչև

Նոզեգալուստի օրը, ինչպէս Պետրոս առաքեալ նոյնիսկ ուրացաւ Տիրոջը (*Ղուկ. 22:56-60*), իսկ Թովմաս առաքեալ չհաւատաց Քրիստոսի յարութեանը և ուզեց Յիսուսի վերքերը տեսնել և ապա հաւատալ (*Յովհ. 20:24-29*), սակայն երբ անոնք Սուրբ Նոզիին շնորհները ստացան (*Գործք. 2:1-5*), առանց վարանումի և վախի, անոնք սկսեցան Մեծ Վարդապետին գործը շարունակել Տիրոջ պատուիրանին համաձայն, ինչպէս ըսած էր իրենց Գալիլիայի մէջ, "Գացէք, այսուհետև աշակերտ դարձուցէք բոլոր հեթանոսներուն, մկրտեցէք անոնց Նօր, Որդիին և Սուրբ Նոզիին անունով: Սորվեցուցէք անոնց այն ամէնը, ինչ որ ես ձեզի պատուիրեցի (*Մատթ. 28:19-20*):

Յիսուս Իր քարոզութեամբ կ'ուզէր Իր ունկընդիրներուն և հետևողներուն հոգիներուն աչքերը բանալ, որպէսզի հաւատի զօրութեամբ մարդիկ կարենային հասկնալ, թէ Ան ինչի՞ մասին կը խօսէր: Քրիստոս ըսաւ, "Ես եմ աշխարհի լոյսը. ով որ իմ ետևես գայ, խաւարի մէջ չի՛ քայլէր, այլ կ'ընդունի կենաց լոյսը" (*Յովհ. 8:12*):

Իմաստուն են անոնք, որոնք Լոյսը կ'ընդունին, կը յուսան Տիրոջը և կը լսեն ճշմարտութեան հօսքը, ինչպէս Պօղոս Առաքեալ ըսաւ, "Անոր միջոցով է, որ դուք ալ լսեցիք ճշմարտութեան խօսքը՝ ձեր փրկութեան Աւետարանը, որուն հաւատալով կնքուեցաք խոստացուած Սուրբ Նոզիով..." (*Եփես. 1:13*): Տիրոջ Լոյսը ընդունելու և հասկնալու համար հաւատացեալը նախ պէտք է երկիրդով և խոնարհ սրտով հաւատ ընծայէ Աստուծոյ: Ապա, եթէ Աստուած արժանի տեսնէ հաւատացեալին, անոր կու տայ "Իմաստութեան և յայտնութեան հոգի Տիրոջը ճանչնալու համար" (*Եփես. 1:17*): Յիսուս ըսաւ, "Ոչ որ չի կրնար գալ ինձի, եթէ այդ իմ Նօրմէս տրուած չէ անոր" (*Յովհ. 6:66*): Իսկ ուրիշ առիթով մը ըսաւ, "Ես եմ ճանապարհը և ճշմարտութիւնը և կեանքը: Ոչ որ Նօրը կու գայ, եթէ ոչ՝ ինձմով" (*Յովհ. 14:6*):